

ԱՄՍԱԳԻՐ

ԳՐԱԿԱՆ · — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ · — ՊԱՏՄԱԿԱՆ
ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ԳԻՏԱԿԱՆ

1843–1897 ՀԱՏՈՐ ԾԵ ՅՈՒԼԻՍ

ԲԵՒԵՌԱԳԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ԳԼՈՒԽ Դ

ԳԱՆԼԸՃԱ

(Eriahi, Irdaniuni).

Արագածի հիւսիս–արեւմտեան լանջերը ասոիճանաբար իջնում են դաշտավայրը, որ նման է Երեւանի տափարակին, բայց աւելի փոքր է և առաւել բարձր նորանից։ Դա Ալեքսանդրապոլի դաշտավայրն է։ Շրջապատած գոլով արեւմքից, հիւսիսից և հարաւ–արեւելքից բարձր Հայոց լեռներով, նա նոյնպէս բոլորաձեւ մեծ ձոր է, թէ և ոչ այնքան ասթային, ինչպէս Երեւանեանն է, բան որում գտնւում է 5079 ոտն. բարձրութեան վրայ ծովի մակերեւութից։ Այս հովիտը նշանաւոր կէտ է գտնազան ճանապարհների, որոնք գտնազան ուղղութեամբ տանում են դէպ ի Մեծ և Փոքր Կովկասի բնակեալ տեղերը. Ախուրեանի վրայից, որ ոռոգում է այս հովիտը, կարելի է բարձրանալ վեր Կուր գետի հովիտը. արդի Ախալքալաքի և Ախալցխայի վրայից կարելի է իջնել Երասխի հովիտը, ուր թափւում է Արփա–չայը (Ախուրեան)։ Այստեղից նոյնպէս ճանապարհ է գնում դէպ ի արեւելք, Ազատն գետի հովիտը, որ իւր կարգին դիմում է դարձեալ Կուր գետի հովիտը։ Դոքա երկու մեծ ճանապարհներ էին Փոքր Կովկասից դէպ ի Մեծն, որով անյիշատակ ժամանակներից շարժւում էին Կովկասեան